

ԱՊԵՂԱՅ

Ամեն մի օրը, որ քեզ լուսանումէ, դու գիտես միայն, հոգեղէն մարդ, նորա սկսուիլը, բայց ինչպէս վերջանալն՝ չէ։ Այդ օրը արդեօք քեզ ուրախութիւն կրերի, թէ ցաւ, քեզանէ դեռ եւս ծածկուած է. ուրեմն ամեն բանէ յառաջ Աստուծով սկսիր։

Կամենալը միայն քո տկար կարողութենէն է. բայց աւելի մի կարողը կայ, որ կամեցածդ կատարուելուն յաջողութիւն պիտի տայ։ Շատ անգամ բոլորովին ուրիշ կերպ է շրջում, քան թէ հոգեղէն մարդի մտքէն կարող էր անցնել, ուրեմն Աստուծով սկսիր։

Բայց ինչպէս եւս որ շուռ է տալի մեր երկնաւոր Հայրը, ինչ եւս որ մեզ կամենումէ, օրհնուած լինի նորա անունն, որովհետեւ ամեն նորա կամեցածն եւս մեր բարւոյն համար է։ Նա քեզ իւր սիրոյ թեւերի վրայ ման կածի ցաւերի եւ ուրախութիւնների մէջէն տանելով բոլոր քո կեանքիդ մէջ. ուրեմն դու Աստուծով սկսիր։

Աղագայ, ի՞նչ պիտի բերես ինձ, ի՞նչ պիտի առնես, տանես ինձանէ։ Ես կանգնած ինչպէս մի փակ դրան առաջին եւ զուր եմ ծեծում, որ ինձ բանային. ես փափագելով իմ ձայնս դէպ ի ներս եմ հասցնում, իմացնելով իմ սրտեռանդն ցանկութիւնս, որ ինձ տեղեկութիւն տուող լինի առաջիկայ պատահարների մասին — եւ ոչ մի պատասխանի ձայն չէ՝ դուրս գալով։

Ի՞նչպէս անհանգիստ կերպով են խփում միլիօնաւոր սրտեր։ Ահն ու յոյսը նրանց հանգիստ չեն թողում, դադար չեն տալի։ Մի քանիսը, թէեւ կարողանային եւս յետ շուռ գալ ու անցեալի վրայ նայել, բայց շատ կան արդեօք այդպիսիքը. շատ ու շատերը մարդկանցից աչքերը տնկած միակերպ նայումեն դէպ ի ապագան քննելու, բան իմանալու կերպով, լաւ ահանջ դնելով, այլ եւ այլ հոգսերի մէջ ընկնելով, տխրութիւն սիրտները պատած։ Ի՞նչ կլինինք մեք. ի՞նչ կլինին մեր ընտանիքը։ Արդեօք կեանքի ամենագառն օրերերն անցուցինք, թէ մեր գլխին գալու աւելի մեծ բաներ կան։

Անբաղար, գլխովն անց կացած դժբաղտութիւններէն արդէն սիրտը կտորած, ահ ու դողի մէջ է, որ տւելի վատ բան չպատահի իւրեան. — Բաղարս, որ այս ու այն յոյսերի կտորութիւնը արդէն մօտիկ իւր առաջին է տեսնում, վախ է գալի վրան, երբ որ մտածումէ թէ, մի անակնկալ դիպուած իւր ամեն սարքած, շինած նախագիծերը չլինի թէ բոլորովին քանդի ոչնչայնի:

Երբ որ մտածումես ինքդ քեզ ասումես թէ այս, իրաւունք ունի մարդս ամեն կերպով՝ հոգսեր անելու, սիրտը մաշելու: — Բայց այդ հոգսերով, այդ մաշուցքներով ինքներս մեզ պիտի կորցնենք մեր առաջն եկող ժամանակի մթութեանը մէջ. — Այ, մեք իրեւ բանականութեան տէր մարդիկ որով պէտէ Բայն պարսպապահ էն ինքնէն — այն ամէնայն Բանի ասալ, ինչ որ Ես Բեզ պարսպապահ էն ինքնէն: Ճշմարիտ քաջասրտութիւնն այն թեթեւամտութիւնը չէ, որ սպառնացող վտանգը չէ տեսնում, անվախ առաջն է գնում, բանի տեղ չգնելով, եւ անպատրաստ եղած ժամանակն՝ յանկարծ վտանգի մէջ ընկնում. ճշմարիտ քաջասրտութիւնն այն՝ ամեն բանի մէջ վհատող յուսահատութիւնը չէ, որ կոյր գիւրայն իւրեան նեղ տեղն է ձգում. բանական, իմաստուն մարդի քաջասրտութիւնն այն անիրկիւղ հոգին ունենալու մէջն է, որ յառաջ է գալի իւր համոզմունքով թէ, Աստուծոյ սէրն է միշտ աշխարհիս ամեն մի բան, ամեն մի դէպք անօրինոյն ու կռաւարդը:

Հողեղէն մարդիկը, որ ժամանակների սաստիկ բերմունքի միջոցին, միայն այնպէս են վարվում, ինչպէս որ այն բուսկին իւրեանց խելքն կտրում է ու միտքներն է գալի իւրեանց չունեցած քաջասրտութիւնը ցոյց են տալի երկու միմեանց բոլորովին հակառակ կերպով:

Կան մարդիկ, որ թեթեւամիտ են եւ թեթեւամտութիւնով են նայում աշխարհիս բաների վերայ. այդպիսիքը, թէ ինչ կպատահի իրանց, դրա վրայ հոգ չեն անում, դոքա իրանք իրանց խաբումեն գեղեցիկ ակնկալութիւններով. հաւատում են, որ կպատահին այնպիսի դիպուածներ, որոց պատահին ամենեւին հաւանական չէ, ու իրանց ամեն քաջած նեղութիւններին վերջ կտրուի. իրանց աչքի առաջին եղածը չեն կարողանում տեսնել, ամենայն բան ուրիշ կերպ եւ իւրեանց հա-

մար աւելի շահաւոր կերպով են մեկնում, քան թէ է, եւ տարուած մարդոց պէս այն տեսակ բաներ են իւրեանց մտքէն անց կացնում, այնպիսի երազներ տեսնում, որ ոչ մի ժամանակ չեն կարող կատարուիլ: Այսպիսի մարդիկը նման են այն ծովագնացներին (նաւով գնացողներին), որոց նաւը կատարի ակիբի ժամանակ աւաղուտ կամ ծանծաղ տեղերի վրայ է տատանում, եւ այդպիսի վտանգը չտեսնելու համար, ոգելից քմակիներով են իւրեանց արեցնում, անդգայացնում: Իրանց գլխին դադիք հարուածների համար տնդատրաստ գտնուելով, աւելի խիտա կերպով միայն կտեսնեն պատահարների սաստիկ հարուածների իրանց վրայ յանկարծ գալն: Նոցա շէն եւ ուրախ սիրտն այն ժամանակ աւելի շուտով է փոխվում, խաւար պատում եւ անմիա յուսահատութեան մէջ են ընկնում: Անբաղտութեան մէջ ընկած օրումը դոցա աւելի վշատած, իրանց կորցրած կտեսնէք, սրչափ որ յառաջ ամեն բանի վրայ ծիծաղելով էին նայում իւրեանց թեթեւամտութեամբ, ամենեւին բանի տեղ չգնելով սպառնացող չարիքն:

Կան նոյնպիսի մարդիկ, որ ի բնէ այնպէս թուլասիրտ են, որ անպագային մարդիս գլխին գալու բաներէն ամենավաղն են սպասում իւրեանց համար: Ամենամեղան բաների մէջ տեսնում են նոքա արդէն իւրեանց վրայ գալու անբաղտութեան յայտնի նշանները: Անգագար չարչարում են իւրեանց անհանգիստ անոպ մտքերով, հոգսերով. առանձին մի նշանակութիւն չտալու լուրերն լսում են, կասկածներ տանելով. ուրախ լուրերի չեն հաւատում, վատ համբաւների շուտով հաւատում են: Այս խելքի մարդիկն արդէն նեղութեան մէջ են կարծում իւրեանց, երբ որ նեղութիւնը դեռ նոր սկսելու վրայ է. արդէն վտանգէն պաշարուած են համարում իւրեանց, իսկապէս վտանգի հետ կռուել դեռ եւս չսկսած: Այդպիսիքը նման են ծոյլ զինուորների, որ վախենալով թէ՛ մի գուցէ շուտով մի կռիւ լինի, ոչ ուտում են, ոչ քնում, որոյժ առնուն, եւ թշնամին մտեցաւ թէ՛ չէ, նոքա արդէն յաղթուած են:

Այս չէ քրիստոնէի քաջասրտութիւնը, որով պիտի զրահաւորուի առաջակայ իւր գլխին գալիքն ընդունելու: Ապա ո՛ր պէտքէ գտնեմ ես այդ քաջ, այդ անվնաս սիրտը:

Այդ սիրտը դու քո մարմնի ու տրիւնի մէջը չես գրտնիլ. դու քո գոյութիւնը, այսինքն է՝ քո անմահ հագուստը բանը պէտքէ լինի. Դու պիտի կորուստանաս քեզ համոզել որ, այն մարդը դեռ եւս ոչ մի բան կորուսած չէ, ով որ ինքն իրան չէ կորցնում. դու պիտի համոզուած լինիս հաստատ կերպով, որ «չէ» է ամենայն երկրաւոր բան, որ քեզ տուած է եւ ունիս, տաշտօն է եղել, եկամուտ է, ինչք ու հարստութիւն է եղել, քո մեծ նշանակութիւնդ, անունդ, ունեցած տառիւղ է եղել, կամ թէ քո ունեցած ու սիրած սփորտական յարմարութիւններդ, որով քեզ հանգիստ եւ զգացիլ ու սրտիդ ուղածին պէս ապրել գոհ եւ ուրախ սրտով. դու պիտի հաստատ կերպով համոզուիս, սիրտդ բոլորովին հանգստացնելով քո առաջ դատողութեան այն պատուական վճռովն թէ, քո ամենամշմարիտ բարեկեցութիւնն (բարեպաշտութիւնն) միայն քո հագուստ հագուստ է. Ասան զի ինչ որ հողէն է շինուած, անգաղար իւր կերպը փոխումէ. վաղուան օրն արդէն ուրիշ կերպ է փոխուել այն, ինչ որ այսօր այնպէս չէր. ինչ որ այնպէս շինուած էր համարւում, որ երկար տարիներ պիտի մնայ, որ յաւիտենական մի բան է, կարող է միայն մի քամու հարուածով փուլ գալ ու քանդուիլ, կոտորներն միայն գետնի երեսն ցան ու ցրիւ եղած տեսնուին մարդիս, սիրտ տխրեցնող, աչքին. Արեւմն մնայունը միայն առտուածայինն է, ուրեմն եւ երանի՝ մարդիս հոգւոյն, որ միացած լինելով Աստուածութեան հետ, արդէն բոլորովին զգուշ է թէ՝ ունի իւր մէջն իւր Երկնաւոր Հօր երջանկութիւնը:

Լեւելէ. — Եմայէ, որ էս է՞ Աստուած, ասումէ մեզ բարձր ու վսեմ ձայնով տիեզերքն Ստեղծողը մեզ անյայտ ապագայի վերայ միտթարելով: Եթէ դու բարեկեցիկ լինել կարող չես, մեծ՝ թէ հասարակ մարդ լինիս, հարուստ՝ թէ աղքատ լինիս, փառաւորուած՝ թէ չճանաչուած ու չգնահատուած մարդ լինիս — ուրեմն ոչ մի ժամանակ բարեկեցիկ եղած չես. ոչ մի ժամանակ եւս բարեպաշտ լինելու չես. ուրեմն դու արժանի ես, որ անբաղդ, թշուառ լինիս, որ սորվիս քո մէջդ բարձրանալ:

Լեւելէ. — Ասան զի մարդոց հնարագիտութիւնը չէ, նոցա ոյժը չէ, նոցա խելքը չէ, որ այս ամեն բան յառաջ է բերել:

թէ այն, ինչ որ պատահել է, եւ թէ այն, ինչ որ գեռ եւս պիտի պատահի. մի ուրիշն է այս ամենն անողը, Բարձրեալն է, որոյ աչքի նայուածքովն երկնքի աստղերի աշխարհներն իւրեանց ճանապարհները, եւ երկրի ամենափոքր օրդերն իւրեանց սողալու տեղերը պիտի գիտենան: Նա է եւ նորանէ ջսկ ուրիշ Աստուած չկայ:

Նա է իշխում ու կառավարում միշտ անքննելի, մեծ, խնայող եւ ամենայն բան ընդգրկող ամենակարողութիւնով: Յուսկոնական տեսչութեան ու վարչութեան մէջ չկայ ոչ մի ուրիշը, որ Նորա արածին նոյնպէս խառնուի: Արեւմտ, ուղեւաճ ու գոյսով, ուղեւ խոնարհութիւնով ու հնազանդութիւնով քո գլխին գալու բաներին սպասիր, ուղեւ քո չկատարուած ցանկութիւններիդ վրայ տխրիր, կամ քեզ մի կերպով միջնորդիր. ուղեւ անցածի վրայ ու ինչ որ երեւում է, որ պիտի պատահի քեզ, յաւատարմութիւնով, կամ ուրախ կացիր, բոլորն եւս ոչ ի՞նչ է, Բոլոր լինելի ու շատ հոգս անելի, քո հրճուելի եւ ուրախութիւնէդ տեղ չգտնելի ոչ մի բան չի փոխիլ աշխարհիս յաւսկոնական կառավարչութեան մէջ: Նորա ամենասուրբ եւ ամենաբարի կամքն է կատարում, մահկանացու մարդն, ուղում է՝ հասկանայ, ուղում է՝ չհասկանայ: Մի աշխարհ, կամ մըջիմներէն հաւաքած, կիտած հողի մի գէղ Բարձրեալ աչքումը միթէ աւելի նշանակութիւն ու արժէք ունի, քան թէ փութութիւնը (ապականութիւնը), որ մարդիկը, կամ մըջիմները շինում են: Եւ որովհետեւ, ո՞վ մահկանացու, քո երկիւղ քաշելով ոչ մի բան ազատել չես կարող, քո նեղանալով ոչ մի բան փոխել չես կարող, ուրեմն ինչո՞ւ պիտի աճ ու գոյի մէջ ընկնես այնպիսի մի բանի առաջին, որ ապագայումն ամբողջ ազգերի, քո խի տանգ ու ընտանեացդ ու քո մարմնիդ կարող է պատահել: Ո՞վ երկրաւոր բնութենէն բարձր հոգի, բարձրացիր միշտ գէտ ի Բարձրեալը, որ մեծ ու ծանր կերպով է ամենայն բան կառավարում, եւ բարեպաշտ խոնարհութեամբ ու հնազանդութեամբ կրնդ ունենալ ինչ որ Նորա սուրբ անօրէնութիւնովը գայ քո գլխին գալու: Դու քո կողմանէ ամենայն հարադատութեամբ, ամենայն հաւատարմութեամբ ու ամենայն սիրով կատարիր քո պարտքդ իբրեւ տան տէր ու հայր, իբրեւ տան ու զաւակաց մայր, իբրեւ ստորագրեալ, իբրեւ քաղաքա-

ցի՛, իրրեւ մարդ ու քրիստոնեայ՝ ու մնացածի վրայ ահ ու դողի մէջ ընկնելու բան չունին:

Լեւելէ՛ որ իմացէ՛, որ է՛ն է՛ Աստուծո՛ւ. Աշխարհիս կառավարիչն ու նորա մէջն ամենայն բան անօրինողն ու կարգադրողն Ամենակարողն է: Միթէ՛ դու, որ այսօր թուլասրտութիւնով գէպի գալու օրերն ես նայում, անցած օրերի ու նոցա մէջ պատահածներէն արգէն Աստուծուն չե՞ս ճանաչած: Նա էր, որ սկըզբէն ի յաւիտենից կառավարումէ եւ ամենայն ինչ անօրինում, որ ամենայն բանի իւր չափն ու նպատակն ցոյց տալի, եւ ամենայն զօրութեան սահման գնում: Նա էր, երկնային զօրաց ու երկրածին մարդոց դաւաճներն Աստուծոն, որի առաջին պրտափի ու մեծ բան ամենեւին չկայ: Կարգէ՛ դուրս բանն անումէ Նա այնպիսի բաներով, որ հոգեղէն մարդոց շատ անգամ՝ ոչինչ բաներ են երեւում, ու չստեղծ բանը կատարումէ Նա ամենօրվայ պատահմունքով: Միլիօնաւոր մահկանացուք գալիս են աշխարհք ու աշխարհքէ դուրս գալի գնում: Նոքա վկայք են մեծամեծ իրողութիւնների, որ լինումեն եւ լսում չստեղծ բանն, բայց տեսածներովն ու լսածներովն աւելի բարեպաշտ մտածմունքի տէր չեն դառնում: Նոցա միտքը հաղիւ թէ՛ Աստուծութեան վրայ է գնում: Նոքա առումեն, լաւ որ այսպէս պատահեցաւ. եկէք ուրախութիւն անե՛նք: Կամ թէ՛ գանգատումեն ու ասում. մայ, ափսոս, որ այսպէս պատահեցաւ. եկէք կոյր դիպումածի խաւարային ու դաժան զօրութեան գէմ գրնենք: Միլիօնաւոր հոգեղէն մարդիկ տեսին արգէն, որ կարելի եղաւ այն բանն, ինչ որ ամեն մարդոց խելքովն անկարելի էր երեւում ու գնումեն իւրեանց բանին, իւրեանց կեանքի ճանապարհի մէջ ահ ու դող քաշելով այն բանէն, ինչ որ գեռ եւս պատահած չէ ու պիտի պատահի՛ գեռ եւս: — Այսպիսի մարդիկն գեռ եւս դարձեալ ճանաչած չեն Աստուծուն: Ի՞նչ հրաշքներ, ի՞նչ նշաններ ու արուեստներ պիտի պատահին, որ դուք հաւատաք. որ դուք լուռ ու մունջ բոլորովին աղաւթնիք ձեր երկնաւոր Թագաւորին, բոլորովին յանձնուելով Նորա տեսութեանն ու առաջնորդութեանը: Ինչո՞ւ էք դուք երկիւղ կրում ապագայէն, երբ որ անցեալի Տէրը գեռ եւս կենդանի է ու իւր իմաստուն, թէեւ մեզ համար անքննելի, իշխանութիւնը վարումէ:

Լուեցէ՛ք ու իմացէ՛ք, որ ես եմ Աստուծո՛ւ Զ: — Աստուած է կառա-
վարիչն աշխարհին, այն Աստուածը, որ միայն ունի կառավարե-
լու իմաստութիւն: Ինչ որ մինչեւ այժմ եղել, պատահել է,
յետոյ գալու ժամանակների աղբերի համար մի բարերարութիւն
էր. ինչ որ պատահելու է այսուհետեւ, մեր ամենիս համար
օրհնութիւն է: Նորա ձեռքումն մի գործի մի կէտն, մի վայր-
կեանն երկրի մէջ ցանա՞ծ սերմի հատին է նմանում, որ հարիւ-
րաւոր տարիներում բուսանում, աճում, հասնում եւ հարիւ-
րաւոր տարիներ անցնելուց յետոյ եւս պտուղ տալիս: Ինչ որ
ներկայ ըստէիս մէջ քեզ բաժին պիտի լինի, Աստուծային ի-
մաստութիւնն անյիշելի դարերի մէջ արդէն սերմանել է. դու
այժմ միայն պիտի վայելես: Փոքրոգի մարդ, միթէ կարող ես
դու կարծել, որ Նա, ով որ քեզ լինելու, քեզ պատահելու բա-
ների հիմն արդէն այն ժամանակն է դրել, երբ որ դու գեռ
եւս աշխարհ ծնած չէիր, միթէ, ասումեմ, կարող ես կարծել,
որ քեզ կարող է մոռանալ այն ժամանակ, երբ որ դու պիտի
ստանաս այն, ինչ որ քեզ պիտի լինի, քեզ պիտի պատահի, երբ
որ պիտի ոտանաս քո բաժինդ Նորա ձեռնէն: Մի արտնջեր, երբ
որ քեզ կորուստներ ունենալ պատահի. մի գանգատեր Նախախ-
նամութենէն, երբ որ աշխարհիս մէջ պատահած բաներն ու-
քո կեանքիդ մէջ քո գլխին եկած բաներն չես կարում հասկա-
նալ ու քո խելքէն դուրս են: Դու քո պարտաւորութիւններդ
կատարիր, ինչպէս Քրիստոս քեզ սորվեցրել է, մնացածի վրայ
թող հոգս անի Նա, որ միայն ունի կառավարելու իմաստու-
թիւն: Տրանջիր աւելի քո խի սրտի թուլութիւններէն, գան-
գատուիր քո սխալանքներիդ վրայ, որ քո հանգստութիւնը
խանգարումեն ու վրդապսւմ: Ինչ որ քո մեղքովդ ես գաել, քո
արարմունքէդ տես: Բայց ինչ որ պատահումէ քեզ դու ես
պատճառը քեզ պատահածին. խի ինչ բան որ քեզանով չէ ե-
ղել, որը քեզանէ հեռացնել ձեռքէդ չի գալ, այն Ամենիմաստ
Հօրդ արած գործն է քո եւ քոյիններիդ, քո սրտիդ մօտիկների
բարւոյն ու բարեկեցութեանն համար: Այդ տեղ ամենեւին
մի մտածիր, հոգս մի աներ, թէ եւ շատ զարհուրելի բան եւս
քեզ երեւի. վասն զի երկինքէն երկրիս վրայ գիշեր զրիտըն
երկնային լուսաւոր աստղերն եւս է ստեղծել:

— Զգալիկան մարդն ամենայն տեղ նայում է գէղ ի ցած, միայն ոչնչութեան ու ոչնչանալու հող ու մոխիր տեսնում ամեն բանի մէջն. իւր միջնած, խաւարապատ խելքն ամենայն բան համարում է անխորհուրդ գիպուածներ, որ միմեանց հետ մի կողմ ունին. Բայց Աստուծոյ մարդը նայում է գէղ ի վեր. նորա համար ինքն իրան յաղթելն, իւր սրտի առաքինութիւնն այն հագեւոր կայն է, որ նորան Աստուծոյ հետ է կապում, եւ այս իսկ պատճառաւ նորա խելքն աւելի գործ կտտարող, աւելի յոտակ, պարզ ու պայծառ, աւելի քիչ սխալող է, որովհետեւ երբէք չէ մտածում, կամ մի բան անում առանց իւր խղճմտանքին հարցանելու. այս պատճառով նորա ոյժն աւելի զօրաւոր է, որովհետեւ մի աւելի բարձր փտաւորութեան եւ ապա ինութեան վրայ է յենում, եւ այս պատճառաւ շատ առաքինի մարդն՝ միանգամայն եւ շատ աներկիւղ մարդն է. Ո՛վ որ Աստուծոյ հետն է, ո՛վ կարող է նորան հակառակ կանգնել:

Լաւեցէ՛ք և խմեցէ՛ք, որ էս է՛մ Աստուծո՛ւ: — Նա է աշխարհս կառավարողն, որոյ քնքոյշ հայրական սէրն միայն իրաւունք ունի իշխելու եւ կառավարելու: Ինչո՞ւ համար ես ասուր մտածմունքի մէջ ընկել, անհանգիստ սրտով մտքէ՞դ այն անցկացնելով թէ, ո՞վ գիտէ աղագան քո առաջդ ինչ պիտի բերի: Մինչեւ ցայժմ եւս դեռ չես ճանաչել ու հասկացել յաւիտենական սէրը քո վաղուց անցուցած օրերիդ մէջն: Քանի քանի անգամ արգէն անցկացած տարիներում, այսօրուան նման դարձեալ այսպէս ամենալաւ բան ստանալու յայտնունէիր, կամ շատ փառքանէ էր երկիւղդ, որ քեզ չպատահի: Ի՞նչ է, ի՞նչպէս եղաւ քանը, փնտ բան արդեօք սպտաւհեցաւ քեզ: Ա՛յ ամենալաւ բանն, որ քեզ պատահեցաւ, քո կարծած փառաւորութիւնն ունեցաւ, եւ ոչ ամենալաւ բանն այնչափ դարհուրելի թուեցաւ քեզ, ինչպէս որ դու կկարծէիր, քանի որ դեռ եւս քեզ պատահած չէր: — Քո կեանքիդ ոչ մի տարին, իսկն որ նայինք, սկզբէն մինչեւ վերջը քեզ համար մի սարսափելի տարի չէ եղել, ժամանակ ժամանակ միշտ մի բուռն (մի փոքր) չկարծած ու չսպառած ուրախութիւններ եւս քնեցել ես, որ քո սրտիդ գիւր են եկել. նոյնպէս եւ կեանքիդ ոչ մի տարին միայն ուրախութիւններով չէ անցել. քաղցրութեան մէջն միշտ մի կաթիլ դառնութիւն եւս գալիս էր ու կաթում, է՛հ, սւրեմն անցած ժամանակի

Հայերն մէջր տես քո բոլոր ապագայի երեւն (պտտիւրն)։ Քո չորս կողմը եղած բաներն ուրիշ ուրիշ կերպարանք են առնում ուրիշ ուրիշ անուն են ստանում՝ ստանան։ Բայց միշտ կտեսնես։ Կհասկանաս որ մեծ ցաւի հետ մի մեծ զուարճութիւն եւս կայ։ Բարձր ստուերն իւր յեանէն սիրտ բաց անող մի լոյս եւս ունի։ Այս լու ազդեցութեան մէջ ճանաչիր ու լու հասկացիր մինչեւ քո կեանքի վերջին ժամը քո երկնաւոր Հօր ամենայն բան կառավարող ու տնօրինող սէրը։

Քո անցկացրած տարիքներումը Աստուծոյ սէրն անշուշտ յայտնի կերպով ճանաչել ու հասկացել ես ուրեմն գնա ու քո կեանքիդ ամեն մի օրումն եւս աւելի հաստատ հաւատով հաւատա նորա սիրալիր խնամքի՝ ու քո հաւատքդ քեզ կբարձրացնի։ Քեզ բարձր կպահի ու այլ եւս չես ընկնիր յուսահատութեան մէջ ու չես կորցնիլ քեզ սիրտդ բոլորովին կտրուելով։ Քանի որ քեզ վտանգներ կսպառնան, այնքան եւս քո սրբաւի քաջութիւնը կաւելանայ։ Վասն զի դու ճանաչումես նորան։ Արայ գթութիւնը քեզ համար արթուն է ու հսկումէ քո վրայ։ Եւ ամեն մի հաւատացեալի հետ կգոչես։ Կգոչես եւ Գաւթի հետն թէ՛ «Աստուած է մեր գորութիւնն ու ապաւէնը, մեր օգնականը մեր մեծ նեղութիւնների մէջ, որ մեզ պաասեցաւ»։ Աւրեմն չվախենանք, եթէ որ աշխարհս եւս քանդուելու լինի ու սարերն ծովի մէջ տեղն թափուելու լինին, եթէ որ ծովն սառալիկ կատաղելու լինի, աղեկածուի ու վրիւրի ու նորա կատաղութենէն սարերն ցածանալու լինին։ Աստուած մեր հետ է ու մեր պաշտպանն է։ Այստեղ եկէք ու տեսէք Տիրոջ գործերն, որ երկրիս մէջ այսպիսի քանդմունք ու աւերմունք անում, որ պատերազմների մէջն առաջնորդումէ բոլոր աշխարհիս երեսին ամեն տեղ։ Որ աղեղները կտորում, նիզակները փշրում եւ պատերազմի կառքերը կրակով այրում։ Լաւեցէ՛ք ու խնայէ՛ք, որ էս է՛մ Աստուած։ Այս Աստուծոյ առաջն եմ դուրս գալիս ուրախ սրտով։ Խնայէս որ մի երեխայ իւր հօր առաջն է դուրս գալի, եւ աղաչումեմ նորան, որ իմ պաշտպանս լինի ինձ անյայտ ապագայում։

Դու ո՞ր Հայր։ Դու միայն ես հօր երկրիս վրայ ու երկնքումը, Դու ես Աստուած, Դու իմ Աստուածս ես։ Ես Քեզ ճանաչել եմ այն ամենայն բաներովն, որ իմ կեանքիս մէջն իմ գլխիս եկել

պատահել են մինչեւ ցայսօր: Եւ Քեզ ճանաչել եմ Քո ամբաւ զօրութիւնսիր: շատ անգամ զմայլելով, շատ անգամ եւս զսղալով: Սորա համար Դու իմ ապաւէնս ես, իմ յոյսս ես: Իմ սրբոսիս զօրութիւնը չէ տկարանում, որովհետեւ Քեզանէ մի մաղի չափ չեմ հեռանալու, իմ գլխիս գալու սարսափելի բաները՝ ոռոտիկ մեծ մրրիկի նման՝ որքան ուղեն իմ չորս կողմն իւրեանց կատաղութիւնն անեն:

Առանց սիրտս կտարելու, առանց որ եւ իցէ կտակածների ու երկիւղի, թէ ինչէր կպատահին արդեօք ինձ, ես ոտս դնում եմ կող օրերի սահմանը: Կարելի է, որ գալու օրերի մէկն ինձ պիտի բերի թշուառութիւն, փախուստ ու աղքատութիւն—, ամենեւնի անբաղաւթիւնն անգամ անլրդով ու անտարբեր սրտով պիտի առնեմ ու մտածեմ, որ Դու, ամենիմաստ Հայր, ինձ քո երկխոյիք փորձել ես ուղում, որ յայտնուի ինձ եւ, գուցէ ինձ նման մարդոց եւս, որ թէ՛ արդեօք սրտով Քեզ եմ կալած, թէ՛ կեանքի ինչքերի ու վայելչութիւնների հետն է իմ սիրտս: Կարելի է, որ այս օրերի մինը իսկ ինձանէ ոչ միայն իմ ունեցած չունեցածս, այլ եւ աշխարհիս վրայ իմ սրտիս մօտիկ ամենէն սիրեկանիս մէկի կեանքն անգամ — սիրտս դող է բռնում, երբ որ այս բանն իմ մօքէն անց է կենում, — Հայր, ո՞վ Հայր սիրոյ, իմ սիրտս արիւնով պիտի լցուի —, բայց խօնարհութեամբ ու հնազանդութեամբ պիտի առնեմ. Դու ինձ նոցա տուիր, Դու առիր ինձանէ: Քո անունն օրհնած լինի (օրհնուի): Կարելի է, որ այս օրերի մինն իմ հոգիս առնող հրեշտակին իմ մօտս պիտի բերի— Հայր, Քո կաթք լինի, Իմ փակ ուղ աչքերս հոգիս տալու միջոցին ու բախտութեամբ վեր կձգեմ դէպ ի Քեզ եւ իմ հոգիս դէպ ի Քեզ կաղաղակէ. ո՞վ ամենագութ Տէր, արժանի արա ինձ մօտել Քո անմահ թագաւորութիւնդ:

ԳՐԻԳ. ԵՊԻՍԿ. ԱՂԱՓ.

ԴԻՏԵԼԻՔ

ՎԱՍՆ ԱՍՏԻՃԱՆԱՅ ՄԱՍՆԱԽՈՐ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ.

Դիտելով թէ՛ հետաքրքիր ազգայինը ցանկանալով ցանկան ծանօթանալ մէն մի ազգային կանոնաց, օրինաց եւ սովորութեանց, որ նուիրական համարեալ են յեկեղեցւոյն, եւ դարա-